ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՋ

ՀՐԱՄԱՆ № 84

«24» 08 2020 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՋԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 46 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Դավիթ Մանուկի Մելքոնյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու և Գևորգ Սուրենի Բաղդասարյանին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնում նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ համապատասխանաբար՝ 24.08.2020թ. N 261-Ա և 262-Ա հրամանները, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 22-րդ հոդվածի 2-րդ մասով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2019 թվականի սեպտեմբերի 26-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի ապրիլի 9-ի N 22 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 46 հրամանի 1-ին կետում.

1) «Մելքոնյան Դավիթ Մանուկի - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ»

պարբերությունը շարադրել հետևյալ կերպ.

« Բաղդասարյան Գևորգ Սուրենի - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ»,

2) «Բաղդասարյան Գևորգ Սուրենի - Երևան քաղաքի դատախազ»

3) Լրացնել նոր պարբերությունով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Գաբրիելյան Կարեն Ավագի -	Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ